ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2020 թվականի N 369-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ, 12-րդ և 48-րդ կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 21-ի N 42/44.2/39751-2020 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքացիական ծառայողին հեռավար ուսուցման մոդուլով վերապատրաստման ընթացքում յուրաքանչյուր շաբաթ մեկ օր ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ քաղաքացիական ծառայության իր զբաղեցրած պաշտոնի, ստաժի և վարձատրության պահպանմամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 28
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2020 թվականի սեպտեմբերի 28-ի N 369-Ա որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴՈՒԼՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ

Հ/հ	Վերապատրաստման մասնակիցները (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոս)	Զբաղեցրած պաշտոնները և ծածկագիրը	Ծրագրի անվանումը	Ժամկետները (սկիզբ-ավարտ)	Ծառայողական պարտականություններից ազատման օրերը
1	Լևոն Պետրոսյան Ռաֆիկի (0223 2-36-62)	Գլխավոր քարտուղար (96-Ղ2-1)	Որոշումների կայացում	01.10.2020-14.10.2020	07.10.2020 և 14.10.2020